

Արձանագրություն № 6 (297)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2017 թ-ի փետրվարի 24-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 18-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

1. ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Բ.Խոջումյանի հաշվետվությունը:
2. Քննաշրջանի արդյունքների մասին:
3. Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Բ.Խոջումյանի հաշվետվությունը:

Ռուսաց լեզվի ամբիոնի /բնագիտական ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Բ.Ս. Խոջումյանը հաշվետվություն ներկայացրեց 2015-2016 ուս. տարվա ամբիոնի գործունեության վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է 30 գիտական աշխատանք:

Բոլոր ֆակուլտետները ապահովված են մասնագիտական ուսումնական ձեռնարկներով: Այժմ վերանայվում են քիմիա, աշխարագրություն և ռադիոֆիզիկա մասնագիտությունների ձեռնարկները: Հրատարակվել է ուսումնական ձեռնարկ Տուրիզմ և սերվիս մասնագիտության ուսանողների համար:

Աշխատանքները ամբիոնում ընթանում են օրացույցային պլանին և նոր դասագրքին համապատասխան: Պարբերաբար անցկացվում են մեթոդական սեմինարներ:

Քննարկվում է մագիստրատուրայի համար նախատեսված ծրագրի, այնուհետ դասագրքի ստեղծման հարցը, որը կպարունակի թերմինաբանական բառարան:

Ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ հետ միասին անցկացվում է ռուսաց լեզվի համալսարանական օլիմպիադան /27.02-3.03/:

Նորոգվել են դպրոցական օլիմպիադայի թեստային առաջադրանքները:

Ամբիոնի դասախոսները ավարտել են որակավորման բարձրացման 5-ամյա ծրագիրը, բացառությամբ մեկ դասախոսի:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկան Պ.Բալայանը: Շնորհակալություն հայտնելով հաշվետվության համար, հետաքրքրվեց ամբիոնի նիստերի և դասալսումների քանակով:

Նա նշեց նաև, որ ռուսաց լեզվի մագիստրոսական ծրագիրը պահանջում է ուսանողների գիտելիքների B-2 մակարդակ, որը միայն մասնագիտական լեզուն չէ: Ծրագիրը պետք է համաձայնեցնել մյուս ամբիոնի հետ, և այն պետք է անցնի մեթոդաբանության:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ Քննաշրջանի արդյունքների մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Ֆակուլտետի դեկանի տեղակալ Դ. Գազարովան:

Ֆակուլտետի 176 ուսանողներից 52-ը անբավարար գնահատական են ստացել են ստացել և տեղափոխվել լուծարքի շրջան: 1-ին կուրսում ամենաշատ անբավարար գնահատականները ռուս գրականություն և ռուսաց լեզու. պրակտիկում առարկաներից են, 4-րդ կուրսում - լեզվաերկրաբանություն առարկայից:

Մագիստրատուրայում 52 ուսանողից 13 անբավարար գնահատական ունեն, հիմնականում, արտասահմանյան գրականություն առարկայից:

1-ին լուծարքից հետո դեռ ունենք անբավարար գնահատականներ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

3. ԼՍԵՑԻՆ՝ Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմությունը՝ 2016-2017 ուս.տարվա 2-րդ կիսամյակում որպես Մոսկվայի կառավարության կողմից տրամադրվող կրթաթոշակների թեկնածուներ երաշխավորել.

Մարիամ Արթուրի Հայրապետյանին՝ Լեզվաբանություն և ՄՄՀ բաժնի 3-րդ կուրսի ուսանող,

Գոհար Արծրունի Ասատրյանին՝ ռուսաց լեզու և գրականություն բաժնի բակալավրիատի 2-րդ կուրսի ուսանող:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

1. ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Պ. Բալայանը տեղեկացրեց, որ ԵՊՀ -ի որոշմամբ ռուսաց լեզվի դասախոսները պետք է անցնեն պարտադիր հավաստագրում: “Ռուսաց լեզու արտասահմանյանների համար” C 1 մակարդակի հավաստագիր ստանալու քննությունը անց է կացվելու ԵՊՀ-ում հունիսին РУДН-ի կողմից: Դասախոսների ցանկը ձշտվում է:

2. ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Պ. Բալայանը: Ամբիոնների վարիչներին առաջադրվեց պատրաստել որակավորման բարձրացման մասնագիտական ծրագրեր:

3. ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ՈՒԳԸ նախագահ Կ. Անուսյանը: Նա տեղեկացրեց ՈՒԳԸ գիտաժողովի անցկացման ժամկետի - 15.03.17. և կատարված նախապատրաստական աշխատանքների մասին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ